«ԱրմԵնՏել» ՓԲԸ

Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտներին համապատասխան՝
ամփոփ ֆինանսական հաշվետվություններ և
անկախ աուդիտորական եզրակացություն

31 դեկտեմբերի 2016թ.

# Բովանդակություն

ԱՆԿԱԽ ԱՈՒԴԻՏՈՐԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ԱՄՓՈՓ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ամփոփ ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն ........ 1
Ամփոփ շահույթի կամ վնասի և այլ համապարփակ
ֆինանսական արդյունքի մասին հաշվետվություն ........ 2
Ամփոփ սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվություն ........ 3
Ամփոփ դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն ........ 4
Ամփոփ ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություն. ........ 5

# *ԱՆԿԱԽ ԱՈՒԴԻՏՈՐԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ*

«ԱրմենՏել» ՓԲԸ-ի բաժնետիրոջը և տնօրենների խորհրդին

Կից ներկայացվող ամփոփ ֆինանսական հաշվետվությունները, որոնք ընդգրկում են 2016թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ամփոփ ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը, և այդ ամսաթվին ավարտված տարվա ամփոփ շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին, սեփական կապիտալում փոփոխությունների մասին և դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունները, որոնք կազմվել են 2016թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա՝ «ԱրմենՏել» ՓԲԸ-ի (այսուհետ՝ «Ընկերություն») աուդիտի ենթարկված ֆինանսական հաշվետվություններից: 2017թ. հունիսի 20-ին մենք արտահայտել ենք դրական կարծիք այդ ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ:

Ամփոփ ֆինանսական հաշվետվությունները չեն ընդգրկում ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտներով պահանջվող բոլոր բացահայտումները: Հետևաբար, ամփոփ ֆինանսական հաշվետվությունների ընթերցումը չի փոխարինում Ընկերության աուդիտի ենթարկված ֆինանսական հաշվետվությունների ընթերցմանը:

***Ղեկավարության պատասխանատվությունը ամփոփ ֆինանսական հաշվետվությունների համար***

Ղեկավարությունը պատասխանատու է աուդիտի ենթարկված ֆինանսական հաշվետվությունների հիման վրա՝ ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտներին համապատասխան ամփոփ ֆինանսական հաշվետվությունների պատրաստման համար:

***Աուդիտորի պատասխանատվությունը***

Մեր պատասխանատվությունն է՝ կարծիք արտահայտել ամփոփ ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ, հիմնվելով մեր կողմից *«Աուդիտորական եզրակացություն տրամադրելու նպատակով՝ ամփոփ ֆինանսական հաշվետվությունների նկատմամբ իրականացվող ընթացակարգեր»* աուդիտի միջազգային ստանդարտ (ԱՄՍ) 810-ի համաձայն իրականացված ընթացակարգերի վրա:

***Եզրակացություն***

Մեր կարծիքով, ամփոփ ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով համապատասխանում են 2016թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա Ընկերության՝ աուդիտի ենթարկված ֆինանսական հաշվետվություններին, որոնց հիման վրա դրանք կազմվել են:

Ալտաֆ Տապիա
Տնօրեն

Սերգեյ Յակովլև
Աուդիտոր

PricewaterhouseCoopers Armenia LLC

20 հունիսի 2017թ.
ք. Երևան, Հայաստանի Հանրապետություն

*«ՓրայսուոթերհաուսԿուպերս Արմենիա» ՍՊԸ*
*ՀՀ, Երևան 0001, Հյուսիսային պողոտա 1, «ՆՈՐԴ» բիզնես կենտրոն, 6-րդ հարկ*
*Հեռ.՝(37460)652165, ֆաքս՝(37410)501341, www.pwc.com/am*

*«ԱրմենՏել» ՓԲԸ*
*Ամփոփ ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն*

| *հազ. ՀՀ դրամ* | 31 դեկտեմբերի 2016թ. | 31 դեկտեմբերի 2015թ. |
|---|---|---|
| **ԱԿՏԻՎՆԵՐ** | | |
| **Ոչ ընթացիկ ակտիվներ** | | |
| Հիմնական միջոցներ | 33,292,529 | 39,876,490 |
| Ոչ նյութական ակտիվներ | 4,014,377 | 3,799,752 |
| Վարձակալված գույքի վրա կատարված կապիտալ ծախսեր | 1,595,764 | 1,792,607 |
| Տրամադրված փոխառություններ | 11,730 | 84,382,370 |
| Հետաձգված հարկային ակտիվներ | 3,676,035 | 2,735,039 |
| Կանխավճարներ ոչ ընթացիկ ակտիվների գծով | 1,984 | 1,081 |
| Այլ ոչ ընթացիկ ակտիվներ | 70,078 | 70,078 |
| **Ընդամենը ոչ ընթացիկ ակտիվներ** | **42,662,497** | **132,657,417** |
| **Ընթացիկ ակտիվներ** | | |
| Պաշարներ | 679,844 | 762,979 |
| Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր | 5,494,618 | 6,381,991 |
| Տրամադրված փոխառություններ | 97,961,109 | 8,280 |
| Շահութահարկի գծով ընթացիկ կանխավճար | 6,095,791 | 5,365,563 |
| Այլ փոխհատուցվող հարկեր | 747,639 | 801,065 |
| Հետաձգված ծախսեր | 24,579 | 18,259 |
| Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ | 2,888,102 | 4,887,089 |
| **Ընդամենը ընթացիկ ակտիվներ** | **113,891,682** | **18,225,226** |
| **ԸՆԴԱՄԵՆԸ ԱԿՏԻՎՆԵՐ** | **156,554,179** | **150,882,643** |
| **ՍԵՓԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼ** | | |
| Կանոնադրական կապիտալ | 18,837,709 | 18,837,709 |
| Չբաշխված շահույթ | 122,086,219 | 116,952,530 |
| Այլ պահուստներ | 2,825,656 | 2,825,656 |
| **ԸՆԴԱՄԵՆԸ ՍԵՓԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼ** | **143,749,584** | **138,615,895** |
| **ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ** | | |
| **Ոչ ընթացիկ պարտավորություններ** | | |
| Ակտիվների ապագործարկման գծով պահուստ | 773,984 | 695,224 |
| Հետաձգված եկամուտ | 66,548 | 108,681 |
| **Ընդամենը ոչ ընթացիկ պարտավորություններ** | **840,532** | **803,905** |
| **Ընթացիկ պարտավորություններ** | | |
| Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր | 7,798,614 | 7,663,878 |
| Հետաձգված եկամուտ | 81,070 | 109,807 |
| Աշխատավարձի գծով կրեդիտորական պարտքեր | 1,688,771 | 1,102,606 |
| Ստացված կանխավճարներ | 1,096,762 | 1,166,742 |
| Պարտավորությունների և վճարների պահուստ | 975,514 | 900,153 |
| Այլ հարկային պարտավորություններ | 323,332 | 519,657 |
| **Ընդամենը ընթացիկ պարտավորություններ** | **11,964,063** | **11,462,843** |
| **ԸՆԴԱՄԵՆԸ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ** | **12,804,595** | **12,266,748** |
| **ԸՆԴԱՄԵՆԸ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ՍԵՓԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼ** | **156,554,179** | **150,882,643** |

Հաստատվել է հրապարակման և ստորագրվել է 2017թ. հունիսի 7-ին:

Անդրեյ Պյատախին
Գլխավոր տնօրեն

Գինա Նիկոլեիշվա
Ֆինանսական տնօրեն

Ժիրայր Պապոյան
Գլխավոր հաշվապահ

*«ԱրմենՏել» ՓԲԸ*
*Ամփոփ շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվություն*

| *հազ. ՀՀ դրամ* | **2016թ.** | **2015թ.** |
|---|---|---|
| Ծառայությունների մատուցումից հասույթ | 43,180,524 | 51,398,809 |
| Սարքավորումների իրացումից հասույթ | 1,921,106 | 1,800,003 |
| **Ընդամենը հասույթ** | **45,101,630** | **53,198,812** |
| Ծառայությունների ինքնարժեք | (29,803,853) | (35,178,565) |
| Իրացված սարքավորումների ինքնարժեք | (1,840,630) | (1,726,970) |
| **Ընդամենը վաճառքի ինքնարժեք** | **(31,644,483)** | **(36,905,535)** |
| **Համախառն շահույթ** | **13,457,147** | **16,293,277** |
| Այլ գործառնական եկամուտ | 483,577 | 1,180,668 |
| Ընդհանուր և վարչական ծախսեր | (6,096,032) | (5,590,244) |
| Իրացման ծախսեր | (3,517,215) | (3,589,402) |
| Այլ գործառնական ծախսեր | (1,898,139) | (6,446,141) |
| **Գործառնական գործունեությունից շահույթ** | **2,429,338** | **1,848,158** |
| Ֆինանսական եկամուտ | 4,040,470 | 3,669,668 |
| Ֆինանսական ծախսեր | (74,992) | (66,177) |
| Զուտ փոխարժեքային տարբերություններից օգուտ | 89,455 | 1,494,675 |
| **Շահույթ մինչև հարկումը** | **6,484,271** | **6,946,324** |
| Շահութահարկի գծով ծախս | (1,350,582) | (3,019,495) |
| **ՏԱՐՎԱ ՇԱՀՈՒՅԹ** | **5,133,689** | **3,926,829** |
| **ԸՆԴԱՄԵՆԸ ՏԱՐՎԱ ՀԱՄԱՊԱՐՓԱԿ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔ** | **5,133,689** | **3,926,829** |

| *հազ. ՀՀ դրամ* | Ընկերության սեփականատերերին վերագրելի | | | |
|---|---|---|---|---|
| | Կանոնադրական կապիտալ | Չբաշխված շահույթ | Այլ պահուստներ | Ընդամենը |
| **Մնացորդը առ 1 հունվարի 2015թ.** | **18,837,709** | **113,025,701** | **2,825,656** | **134,689,066** |
| Ընդամենը 2015թ. համապարփակ ֆինանսական արդյունք | - | 3,926,829 | - | 3,926,829 |
| **Մնացորդը առ 31 դեկտեմբերի 2015թ.** | **18,837,709** | **116,952,530** | **2,825,656** | **138,615,895** |
| Ընդամենը 2016թ. համապարփակ ֆինանսական արդյունք | - | 5,133,689 | - | 5,133,689 |
| **Մնացորդը առ 31 դեկտեմբերի 2016թ.** | **18,837,709** | **122,086,219** | **2,825,656** | **143,749,584** |

| *հազ. ՀՀ դրամ* | **2016թ.** | **2015թ.** |
|---|---|---|
| **Գործառնական գործունեությունից դրամական միջոցների հոսքեր** | | |
| Հաճախորդներից ստացված վճարումներ | 51,744,498 | 59,428,345 |
| Ստացված տոկոսներ | 191,724 | 210,098 |
| Մուտքեր այլ գործառնական գործունեությունից | 730,135 | 127,143 |
| Ծառայությունների մատուցման գծով վճարումներ | (20,586,380) | (24,919,279) |
| Վճարումներ աշխատակիցներին | (7,780,551) | (7,851,762) |
| Վճարված շահութահարկ | (3,224,000) | (5,732,455) |
| Վճարումներ բյուջե, բացի շահութահարկը | (3,945,526) | (5,329,998) |
| Վճարումներ պաշարների մատակարարներին | (2,359,418) | (2,453,280) |
| Վարձակալության վճարներ | (1,366,491) | (1,363,532) |
| Գործուղումների համար կատարված վճարներ | (140,167) | (129,928) |
| Այլ գործունեությամբ օգտագործված դրամական միջոցներ | (384,172) | (326,221) |
| **Զուտ դրամական միջոցների հոսքեր գործառնական գործունեությունից** | **12,879,652** | **11,659,131** |
| **Դրամական միջոցների հոսքեր ներդրումային գործունեությունից** | | |
| Հիմնական միջոցների ձեռքբերում | (5,415,653) | (6,601,410) |
| Հիմնական միջոցների վաճառքից մուտքեր | 124,319 | 68,620 |
| Մայր կազմակերպությանը տրամադրված փոխառություններ | (9,587,600) | (7,595,680) |
| Տրամադրված փոխառության մարում | 8,280 | 8,280 |
| **Ներդրումային գործունեությամբ օգտագործված զուտ դրամական միջոցներ** | **(14,870,654)** | **(14,120,190)** |
| Փոխարժեքային տարբերությունների ազդեցությունը դրամական միջոցների և դրանց համարժեքների վրա | (7,985) | (31,731) |
| **Դրամական միջոցները և դրանց համարժեքները տարեսկզբին** | **4,887,089** | **7,379,879** |
| **Դրամական միջոցները և դրանց համարժեքները տարեվերջին** | **2,888,102** | **4,887,089** |

***Ծանոթագրություն***

Համաձայն «Հաշվապահական հաշվառման մասին» ՀՀ օրենքի պահանջների՝ «ԱրմենՏել» ՓԲԸ-ն պետք է հրապարակի իր ֆինանսական հաշվետվությունները:

Սույն ամփոփ ֆինանսական հաշվետվությունները ներառում են 2016թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ամփոփ ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը, և այդ ամսաթվին ավարտված տարվա համար՝ ամփոփ շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին, սեփական կապիտալում փոփոխությունների մասին և դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունները, որոնք կազմվել են 2016թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա՝ «ԱրմենՏել» ՓԲԸ-ի (այսուհետ՝ «Ընկերություն») աուդիտի ենթարկված ֆինանսական հաշվետվություններից:

Կից ներկայացված ամփոփ ֆինանսական հաշվետվությունները չեն ներառում ֆինանսական հաշվետվությունների ամբողջական փաթեթում ներկայացված բոլոր բացահայտումները, մասնավորապես, հաշվապահական հաշվառման քաղաքականության հիմնական դրույթները և այլ ծանոթագրությունները, որոնց բացահայտումը պահանջվում է Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտներով: Ֆինանսական հաշվետվությունների ամբողջական փաթեթը կարելի է ստանալ Ընկերության ղեկավարությունից՝ ըստ պահանջի: